



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060517670 էլ. փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
04 ՀՈՒՆԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 100

**ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի ԹԻՎ 99
ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 30-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի եվ շինության մրցույթային կարգով կառուցապատման եվ վերակառուցման իրավունքի տրամադրման պայմանագիրը լուծելու մասին » թիվ 99 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՊՈՂՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, Հեռ.060517670, էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
04 ՀՈՒՆԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 101

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԵՐԸ

ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 32-րդ հոդվածի, Քաղաքացիական օրենսգրքի 423-րդ, 466-րդ, 468-րդ և 469-րդ, 564-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արմեն Նալչյանի և Գրիգորի Գևորգյանի միջև 25.07.2001թ.-ի կնքված Անշարժ գույքի Առուձախի սեղանամատյանի համարը 1-2341 պայմանագիրը և քաղ. Գրիգորի Գևորգյանի դիմումը **որոշում եմ**

Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի և քաղաքացի Արմեն Նալչյանի միջև 25.07.2001թ.-ի կնքված՝ Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերը վարձակալության հանձնելու մասին սեղանամատյանի համարը 1-2335 պայմանագիրը լուծել կողմերիս փոխադարձ համաձայնությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՊՈՂՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060517670 էլ. փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՀՈՒՆԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 102

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 60-րդ, 64-րդ հոդվածի 8, 16 և 118-րդ հոդվածի 4-րդ կետերի, «Հիրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 3-րդ հոդված «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2008թ.-ի նոյեմբերի 13-ի «Հիրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 1328-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Ազգային Արխիվ ՊՈԱԿ-ի Արուսյանի տարածքային ներկայացուցչի 19.02.2019 թ. Թիվ Աբ-346 պատասխան գրությունը հողատկացման հիմքերը պահպանված չլինելու կապակցությամբ, ՀՀ Կոտայք նոտարական տարածքի նոտարի կողմից 12.11.2003թ.-ին հաստատված սեղ.մատ. 4065, Ժ/գ 236 Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «Հաբչին Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից 25.09.2018թ. տրված Տեխնիկական եզրակացությունը, «Գեոլենդ» ՍՊԸ-ի կողմից կազմած հատակագծերը, քաղ. էմմա Խաչատրյանի դիմումը և հաշվի առնելով, որ բնակելի տունը, դրա կառուցման և սպասարկման համար փաստացի առկա հողատարածքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, իսկ առկա շինությունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը՝ **որոշում եմ.**

1. Վերականգնել Վերին Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող 07-062-0032-0006 կադաստրային ծածկագրով՝ 0.0437 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հատկացման հիմքերը համաձայն կից հատակագծի, և օրենքի ուժով ճանաչել այն որպես սեփականություն տիրապետող 29.12.1935թ. ծնված էմմա Խաչատրյանի սեփականության իրավունքը :

2. Վերը նշված հողատարածքի վրա 1989-1990թթ. կառուցված 154.51քմ մակերեսով անհատական բնակելի տան նկատմամբ օրենքի ուժով ճանաչել այն որպես սեփականություն տիրապետող 29.12.1935թ. ծնված էմմա Խաչատրյանի սեփականության իրավունքը

3. Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

4. Անշարժ գույքին տրամադրվում է փոստային հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Վերին Պտղնի, Երևան-Աբովյան խճուղի , փակուղի 1, թիվ 8:

5. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՊՈՂՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060517670 էլ. փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

07 ՀՈՒՆԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 103

**ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Դեկլարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով, որոշում եմ.

1. Վերին Պտղնի համայնքային սեփականություն հանդիսացող /կադաստրային ծածկագիր 07-062-0005/-ից 0.0126 հա հողատարածքին տրամադրել հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի 1-ին փողոց թիվ 2/3:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2019 թ. հունիսի 07
գ. Վերին Պտղնի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060517670 էլ. փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ
07 ՀՈՒՆԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 104**

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1 կետերի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացի Ստեփան Էվաջյանի դիմումը, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ շինությունը կառուցվել է ինքնակամ կառուցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ **որոշում եմ.**

1. Քաղաքացի Ստեփան Էվաջյանին սեփականության իրավունքով պատկանող, Վերին Պտղնի Նոր թաղամաս 1-ին փողոց թիվ 1 հասցեում գտնվող տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները՝ բնակելի տուն՝ 83.7 քմ, ինքնակամ շինություններ՝ 60 քմ (ծածկարան, կաթսայատուն և օժանդակ շինություն) համարել օրինական:

2. Սահմանել, որ հողամասի սեփականտերը

1) Որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Վերին Պտղնի համայնքի բյուջեի N 900105231212 հաշվեհամարին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված բնակելի տան համար 217620 / երկու հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր քսան/ ՀՀ դրամ և ինքնակամ կառուցված շինությունների համար 93600/ իննսուներեք հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ օրինականացման վճարը:

2. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 19թ. հունիսի 07
գ. Վերին Պտղնի

